600.0011.09.03.01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 մարտի 2001 թվականի №11
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԲԱՇԽԻՉ ՑԱՆՑԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՏՐՎՈՂ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԱԽԱԳԾԻ և ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու և «Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և հաշվի առնելով սույն թվականի մարտի 7-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքը, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի սեփականաշնորհումից հետո նրանց տրվող գործունեության լիցենզիայի ձևը (հավելված № 1):
2. Հաստատել ռազմավարական ներդրողի հետ կնքվող սակագնային մարժայի համաձայնագրի ձևը (հավելված № 2):
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 2001 թվականի հունվարի 8-ի №2 որոշումը:

4. Սույն որոշման 1-ին կետով հաստատված փաստաթուղթն ուժի մեջ է մտնում «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի ուժի մեջ մտնելու պահից:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ՝ **Վ. ՄՈՎՍԵՍՅԱՆ**